

ԱՆՁԻ ԱԶԳԱՔՆՈՐՈՇ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԱՌԱՎՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Ռ. ՀԱԿՈՐՅԱՆ

«Սոցիալականացում» կամ «սոցիալիզացիա» հասկացությունը մեկնարանում են որպես շփման և գործունեության մեջ իրականացվող անհատի սոցիալական փորձի յուրացման և ակտիվ վերարտադրման գործընթաց և արդյունք<sup>1</sup>:

Ժամանակակից արտասահմանյան սոցիոլոգիայում «սոցիալականացում» հասկացությունը բնութագրվում է որպես անհատի կողմից այն հասարակության սոցիալական նորմերի և մշակութային արժեքների յուրացումը, որին նա պատկանում է: Ինչպես տեսնում ենք, անձի սոցիալականացման ընդհանուր բնութագրման հարցում էական տարբերություն չկա:

Անձի սոցիալականացումը կարող է տեղի ունենալ ինչպես տարբերային սոցիալական ազդեցությունների, որոնք երբեմն ընդունում են տարբեր ուղղվածություն ունեցող գործոնների բնույթ, այնպես էլ դաստիարակության, այսինքն՝ անձի նպատակասլաց ձևավորման պայմաններում: Սոցիալականացման ժամանակակից տեսության կոնսերվատիվ գտնվում են անվանի Ֆլորանսիական սոցիոլոգ Տարդի աշխատություններում, որն առաջին փորձն է արել նկարագրելով վարքի նորմերի ներքնայնացումը սոցիալական փոխազդեցության միջոցով՝ իր տեսության հիմքում դնելով ընդօրինակման սկզբունքը:

Հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ ներմուծվել է 40—50-ական թվականներին Ա. Բանդուրայանի, Գ. Կոլմանի և այլոց աշխատություններում՝ տարբեր գիտական դրսևորոցներում ստանալով տարբեր մեկնարանություններ: Նեոբիհեյդերիզմը այն բացատրում է որպես սոցիալական ուսուցում, խորհրդանշանային ինտերնացիոնալիզմը՝ որպես սոցիալական փոխազդեցության արդյունք, հումանիստական հոգեբանությունը՝ ես-հիմնադրույթի ինքնաակտիվացում:

Հոգեբանության մեջ «սոցիալականացում» հասկացությունը դեռևս միաթեք մեկնարանություն չունի: Դա է վկայում նաև նրան զուգընթաց համանիշների կիրառումը՝ «անձի զարգացում», «սոցիալական զարգացում», «դաստիարակություն» և այլն, որոնք բնորոշում են այնպիսի մի գործընթաց, որի ընթացքում անհատը դառնում է անձնավորություն: Այս առումով ամերիկացի հայտնի սոցիալական հոգեբան Պարսոնսը կարևորում է մանկան սոցիալականացումը՝ դրան վերապահելով որոշիչ նշանակություն ու միայն անհատի, այլև հասարակության ձևավորման համար: Ըստ Մ. Ի. Բոքենայի, սոցիալականացման գործընթացը բնորոշվում է որպես որևէ հասարակական խմբի համար «տիպական» անձնային կառուցվածքի ձևավորում: Նա անձի սոցիալական զարգացումը տարբերակում է սոցիալականացումից, մինչդեռ անձի սոցիալականացումը և սոցիալական զարգացումը ըստ էության նույն գործընթացներն են, և սոցիալականացում ասելով պետք է հասկանալ անձի սոցիալական զարգացում, որպես անձի ձևավորման ու զարգացման գործընթաց՝ ծննդյան օրից մինչև սոցիալ-հոգեբանական հասունություն, որի ընթացքում կատարվում է վարքի ձևերի, սկզբունքների, գիտելիքների, հաղորդակցման ու լիզվի յուրացում<sup>2</sup>:

Ըստ մեզ, այս բնութագրին պետք է ավելացնել նաև այն, որ սոցիալականացման ընթացքում անձնավորությունը ձեռք է բերում սոցիալական դիրքորոշումների և վերաբերմունքների մի ամբողջ համակարգ՝ կյանքի, աշխատանքի, շրջապատող մարդկանց ու իրականության, վարքի, բարոյականության, իրավական նորմերի նկատմամբ:

Մեզ համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում անձի սոցիալականացման ազգա-

<sup>1</sup> Տե՛ս Дж. Фейдимен, Р. Фрейгер, Личность и личностный рост, М., 1993, էջ 217:

<sup>2</sup> Ա. Ա. Նալչալյան, Անձ. խմբային սոցիալականացում և հոգեբանական ազապտացիա, Ե., 1985 թ., էջ 75:

ին ուրաք, որը, տվյալ դեպքում, իրականանում է ազգային խմբերում անձի և խմբի ակտիվ փոխներգործության միջոցով:

Անձի ազգային սոցիալականացման և լիարժեք էթնոկիր դառնալու գործընթացի վերաբերյալ ժամանակակից հոգեբանության մեջ բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվում: Չնայած հսկայածավալ փաստական տվյալներին, այդուհանդերձ, բազմաթիվ հանգուցային հիմնահարցեր մնում են դեռևս չլուծված, որոնք ցույց են տալիս սոցիալ-հոգեբանական հետազոտությունների մի նոր բնագավառ և բնորոշում են որպես գործընթաց, որի ընթացքում անհատը դառնում է էթնոկիր, իր էթնիկական խմբի ակտիվ և լիարժեք մասնակից, ազգայնորեն բնորոշ դերերի և գործունեության ձևերի յուրացնող և ակտիվ վերարտադրող:

Այսպիսով, անձի ազգային սոցիալականացումը տվյալ ազգային միջավայրի համար էթնոկիր ձևավորման, զարգացման ու հասունացման գործընթաց է, որը սկսվում է անձի ծնված օրից՝ սոցիալականացման առաջին պարբերաշրջանից:

Այս շրջանում էթնոկիր ազգաբնորոշ սոցիալականացումը իրականացվում է կարևորագույն մեխանիզմի՝ բանավոր իդեոսֆիլիացիայի շնորհիվ: Այն տեղի է ունենում լեզվի, տվյալ դեպքում՝ ազգային լեզվի, յուրացման և ակտիվ կիրառման շնորհիվ, քանզի վերջինս, ընդունակ լինելով ծառայել ազգային մտակերտվածքի բացահայտմանը, անշուշտ իրականացնում է կարևորագույն ազգայնամետ գործառույթ: Ազգային լեզուն ազգային հոգեկանի խտացումն է և խոր ազդեցություն է գործում ազգայնորեն սոցիալականացվող յուրաքանչյուր անհատի վրա: էթնոկիր սոցիալ-հոգեբանական հասունացման համար խիստ կարևորվում է ազգային լեզվի և նշանագրային մյուս համակարգերի յուրացումը, ընկալումը և ըստ ամենայնի կիրառումը: Վերջիններս կրում են խոր հոգեբանական իմաստ, ազգային հոգեկանի կողմեր, դիրքորոշումներ, ազգային մտածողություն, երևակալության խմբային և անհատական առանձնահատկություններ, որոնք սնրտորեն առնչվում են էթնոկիր ձևավորման ու զարգացման հետ: Այսպիսով, ազգաբնորոշ սոցիալականացման առաջին պարբերաշրջանի հաղող իրականացման համար խիստ արժևորվում է մայրենի յուրացումը և կիրառումը:

Ազգաբնորոշ սոցիալականացումը իր հետագա ընթացքն է ստանում նաև նրա առաջին պարբերաշրջանից հետո՝ շարունակվելով երկրորդ պարբերաշրջանում: Վերջինս կարևորվում է ապագա էթնոկիր լիարժեք ձևավորման ու զարգացման, ազգային արժեքների ու սպասումների, սովորույթների ու ավանդույթների, վարքի ու բարքի և այլնի յուրացման ու ակտիվ կիրառման առումով: Սա մի ժամանակահատված է, երբ անձը կանգ է առնում ազգային ինքնորոշման գիտակցման և այս բնագավառում որոշակի դիրք ձեռք բերելու անհրաժեշտության առջև:

Անձի ազգաբնորոշ էությունը լիարժեք սոցիալականացման բոլոր փուլերը պետք է ընթանան էթնոկիր ու էթնիկական միջավայրի ակտիվ փոխներգործության պայմաններում, որի գործընթացում կատարելով էթնիկական դերեր՝ անհատը միաժամանակ ակտիվ հոգեբանական նույնացում է ունենում: Ազգայնաբնորոշ սոցիալականացման գործընթացում էթնոկիրը, բացի իր էթնիկական խմբից, իմանում է նաև մի շարք այլ էթնոսների ու էթնիկական խմբերի մասին, որոնց անդամ ինքը չի հանդիսանում:

Եթե էթնոկիրը շանքեր չի գործադրում իր ազգային մշակույթին ու արժեքներին հաղորդակցվելու, ապահովելու վերջիններիս ակտիվ հոգեբանական նույնացումը, ապա սա արդեն միանշանակորեն խոսում է սեփական ազգից օտարման գործընթացի առկայության և հետագայում խորացման մասին, հանգամանք, ինչը բացասաբար է անդրադառնում ցանկացած էթնոկիր ազգային ես-պատկերի ձևավորման, զարգացման ու հասունացման վրա:

Տար էթնիկական իրադրություն մեջ իր կենսագործունեությունը ծավալող հայ անհատի հաղորդակցման, շփման ու անընդհատ դերակատարումների գործընթացը ստիպում է նրան ձեռք բերել բնավորության նորանոր գծեր, դիրքորոշումներ, համոզմունքներ, արժեքներ և սպասումներ, ինչը էթնոկիր հոգեկանում առաջ է բերում կոնֆլիկտային վիճակ: Վերջինս հետևանք է անհամատեղելի արժեքների, սպասումների, դիրքորոշումների բախման, քանզի անձը կամ թե ակամա ստիպված է լինում իրագործել միաժամանակ երկու՝ թե իր ազգային էթնոկիր և թե տվյալ հասարակության անդամի դերը, ներքնայնացնել տվյալ սոցիալական իրականությանը բնորոշ արժեքները, սպասումները, դիրքորոշումները, համոզմունքները և այլն:

Մինչդեռ այդ երկու դերերը անհամատեղելի են, որը ստիպել էթնիկական իրագործությունում աստիճանաբար հանգեցնում է էթնիկական դերի նահանջի: Պատճառն այն է, որ տվյալ դեպքում էթնիկական դերը անձը կատարում է սոցիալական տեսակետից անհամապատասխան բեմի վրա:

էթնոկիր ազգաբնորոշ սոցիալականացումն իրականացնելու գործում հիմնարար նշանակություն ունի իր էթնոսի անդամների հետ հոգեբանական նույնացումը, այսինքն՝ իր ազգի մշակույթի, լեզվի, սովորույթների, ավանդույթների, դիրքորոշումների, ակնկալվող հակազդում-

<sup>3</sup> Տե՛ս R. H. Tyrner. Personality in society, Albany, 1994, էջ 322:

<sup>4</sup> Տե՛ս K. H. Danziger, Socialization; N. Y. 1992, էջ 288:

ների, հայացքների համակարգի ակտիվ ներքնայնացումը, որը հասունացնում ու զարգացնում է անձի ազգային ես-պատկերը:

Տարէթնիկական իրականությունում էթնոկրի ազգաբնորոշ սոցիալականացումը ընթանում է հակադարձ ձևով. այդ դեպքում նրա սոցիալականացումը իրականանում է առավել լրիվ ու խորը տարէթնիկական իրականության անդամների հետ՝ ապահովելու համար այդ իրականությունում իր հաղող սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացը, անընդհատ հարմարեցնելով իր վարքագիծը սովյալ սոցիալական իրականության ներկայացրած պահանջներին:

Ինչպես իրավացիորեն նշում է Հ. Պողոսյանը, միջավայրը անմիջականորեն ներգործում է անձի բարեկրթության, վարքի ու բարքի, մտածողության, նույնիսկ լեզվական արտահայտչականության վրա՝ իր կնիքը թողնելով ոչ միայն անհատներին, այլ նաև ազգերի վրա: «Անուրանալի իրողութիւն մըն է, որ միջավայրը միահեծան կերպով կը իշխե թե անհատներուն ու թե ազգերուն վրայ: Անոնց մարմինը, բնավորութիւնը, ուժը, գործողութեան շափը և անոնց միտքն ու հոգին միջավայրի ազդեցութենէն կը ազդուին, կը եղանակավորուին ու կամ էլ կը փոխուին: Դարձեալ միջավայրն է, որ մարդուն կերակուրը, հագուստեղենը, բնակավայրը, վերջապէս անոր քաղաքակրթութեան որակը և բույթը կորոշեմ»<sup>5</sup>:

Հիմնախնդրին ազգային հոգեբանության դիրքերից մոտենալու դեպքում, խիստ հետաքրքրություն է ներկայացնում անձի ազգային դիրքորոշումների ձևավորման հարցը, նրանց փոխներթափանցումը, որոնց սոցիալ-հոգեբանական մեխանիզմները դեռևս լիարժեքորեն բացահայտված չեն: Սակայն անհրաժեշտ է նշել ազգային դիրքորոշումների կարևորագույն գործառույթի մասին, քանզի այն անձի ենթագիտակցական պատրաստականության հատուկ վիճակ է, որը նախորդում է դիտակցական հոգեկան գործընթացներին, պայմանավորում անձի ձևավորումը, զարգացումն ու հասունացումը, իսկ էթնիկական դիրքորոշումների մասին խոսելիս՝ անձի ազգային ես-պատկերի ձևավորումը: Ազգային հոգեբանության համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում անձի ազգային դիրքորոշումների փոփոխության խնդիրը, վերջիններին ուսումնասիրությունը վերածվում է ազգային հոգեբանության համար սկզբունքորեն կարևոր խնդրի:

Տարբերակվում են անձի ազգային դիրքորոշումների հետևյալ տեսակները. առաջին՝ էթնոմտած, որպես անձի ներքին կողմնորոշման հատուկ վիճակ, միտված դեպի էթնիկականը, ազգայինը, առավել ավանդականը: Այն հենվում է ազգային լեզվի, ավանդույթների, սովորույթների, բնավորության, կրոնի մասին անձի ունեցած պատկերացումների և մտքերի վրա: Դա այն զգացումն է, որ սովյալ դիրքորոշում ունեցողը տածում է ազգային լեզվի, սովորույթների, ավանդույթների և ազգային այլ արժեքների նկատմամբ, դրանք ըստ ամենայնի պահպանելու միտումը և այն գործողությունները, որոնք անձը կատարում է որոշակի իրադրություններում և հանգամանքներում<sup>6</sup>:

էթնոմեթոզ դիրքորոշումը անձի ներքին և առավելապես ենթագիտակցական պատրաստականության վիճակ է՝ չպահպանելու և մերժելու ազգայինը:

Անձի ազգային դիրքորոշման ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել անձի ազգաբնորոշ էությունը սոցիալականացման հոգեբանական մեխանիզմների առանձնահատկությունները, այն, թե ինչ փոփոխությունների են ենթարկվում էթնոկրի ազգային դիրքորոշումները բնակավայրի, կենսապայմանների, գործունեության բնույթի փոփոխությունների ժամանակ, այն, թե ազգային դիրքորոշումների որ քաղադրամասն է առավել ընկալունակ փոփոխության, ինչպես է իրականանում դիրքորոշումների փոխներթափանցման գործընթացը, ինչպես խուսափել կասխատեսելի և անկասխատեսելի դժվարություններից և բարդություններից:

Անձի ազգային սոցիալականացման առումով հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ազգային դիրքորոշումների ուսումնասիրությունը:

Երկրորդ՝ էթնիկականի և տարէթնիկականի փոխազդեցության հետևանքով էթնոկրի մոտ երևան են գալիս նորակաթուցություններ (իննոպացիաներ), որոնք միևնույն ժամանակ երկու տարբեր դիրքորոշումների (էթնոմտած և էթնոմեթոզ) փոխազդեցության արդյունք են:

Երկարաժամկետ քննությունը տարէթնիկական միջավայրում էթնոկրին հաճախ պարտադրում է սոցիալականացվել հօգուտ տարէթնիկականի, ինչը խաթարող գործոն է անձի ազգաբնորոշ էությունը սոցիալականացման, նրա ազգային ես-ի ձևավորման ու զարգացման համար:

էթնոկրի ազգաբնորոշ էությունը, սոցիալականացման ուսումնասիրության գործընթացում հատուկ ուշադրության պետք է արժանացնել ազգային խորհրդանիշները (սիմվոլները) յուրացնելու գործընթացներին, որոնք ազգային սոցիալականացման խիստ կարևոր կողմ են, քանզի նրանք ստեղծում են էթնիկական ընդհանուր արժեքներ և դիրքորոշումներ: Ազգաբնորոշ սոցիալականացման այս կողմը կարելի է անվանել սեմիոտիկական-պոիտիլիզմատական: Ցուրաց-

<sup>5</sup> Հ. Պողոսյան, Ներածություն հայ ներածության, Կահիրե, 1958, էջ 220:

<sup>6</sup> Ն. Հակոբյան, Երկրկողմություն, անձի սահմանային կարգավիճակ և էթնիկական դիրքորոշումներ, Ե., 1995 թ., էջ 140:

Նելով ազգային խորհրդանիշերը, ծեսերն ու արարողությունները և ազգային մշակույթի այլ գրեթե ումեններ՝ էթնոկիրը կարողանում է խորությամբ ընկալել իր ազգի մշակույթն ու գաղափարախոսությունը՝ դրանով իսկ ապահովելով էթնիկական տեսակետից հոգեբանական նույնացումը: Ազգային խորհրդանիշերի ընկալումն ու ըստ ամենայնի կիրառումը թույլ է տալիս հասնել էթնոկրիին ազգային մտածելակերպի տարրեր կողմերի բացահայտմանը: էթնոկրիի ակտիվ հոգեբանական նույնացումը խիստ դժվարանում է առանց ազգային խորհրդանիշերի և նրանց իմաստի յուրացման: Յուրաքանչյուր նոր սերնդի լիարժեք սոցիալականացման և սոցիալ-հոգեբանական հասունացման համար խիստ կարևոր է ազգային լեզվի և տվյալ ազգի կողմից ըստեղծված նշանային մյուս համակարգերի յուրացումը և ակտիվ գործածությունը:

Համառոտակի կանգ առնենք այն հիմնահարցերի վրա, որոնց լուծումով պայմանավորված է անձի ազգային սոցիալականացումը, էթնոկրիի ես-պատկերների ձևավորումն ու զարգացումը, էթնոմետ գիրքորոշումների ձևավորման ու էթնոկենտրոն կարգավիճակին:

— Ուսուցչի, որպես մասնագետի, մանկավարժ հոգեբանի պատրաստությունը, որի գերխնդիրը լինի երեխայի մեջ ազգահոգեբանական հատկանիշների ձևավորումն ու զարգացումը, ազգային լեզվի, ստեղծագործության, մտքերի, ապրումների, փոխհարաբերությունների, հոգեբանական յուրահատկությունների ներարկումը:

— Կապված բնակչության շարժազդի հետ՝ հատուկ կադրերի պատրաստումը, նկատի ունենալով ուսումնական գործընթացի առանձնահատկությունները՝ նրանց մանկավարժ-հոգեբանական պատրաստությունը, որի հիման վրա նա կարողանա սահմանային կարգավիճակում հայտնված աշակերտության հետ աշխատել:

Անձի էթնոսոցիալականացման կարևոր մեխանիզմն է նաև ծավալվող մանկավարժ-հոգեբանական աշխատանքների միտվածությունը, որը իրականացնելիս անհրաժեշտ է.

— Կիրառել մանկավարժական մտքի նվաճումները՝ դրանք համադրելով միջազգային լավագույն փորձին:

— Նոր սերնդի ազգային դաստիարակության ապահովում ամենատարբեր միջոցներով, մասնավորապես ազգային լեզվի, մշակույթի, սիմվոլների միջոցով նրանց նշանակության ու կապի բացահայտումը, որը հնարավորություն կտա իրականացնել հայ էթնոկրիին իր էթնիկական խմբի հետ հոգեբանական նույնացումը:

— Ազգային բնավորության, նրա բնորոշ բաղադրիչների սերմանում՝ միևնույն ժամանակ ցույց տալով տարբեր ազգերի արժեքային կողմնորոշումների տարբերությունները:

Այս գործընթացը պետք է ընթանա դեռևս ամենավաղ տարիքից, քանզի եթե վաղ տարիքը չի ապահովում ազգային սոցիալականացումը, հրեխան չի սողորվում սեփական ազգին պատկանելու զգացումով, դառնում է օտարված և անտարբեր:

էթնոկրիի ազգաբնորոշ սոցիալականացումը անհատին մեծապես պաշտպանված է դարձնում օտար ազդեցություններից: Այս դեպքում միայն ազգին բնորոշ էթնոկիրը կարող է խորությամբ ուսումնասիրել տարէթնիկականը, առանց իր ազգային լեզուն, վարքը, կենսաձևերը, արժեքներն ու սպասումները հարմարեցնելու օտարին, այլ օտարին նայելով ազգայինի դիրքերից:

**Н. Р. АКОПЯН—Особенности национальной социализации личности.—**В статье рассматриваются разновидности и особенности социализации личности, выделяются ее этносоциальные черты, проводятся параллели между этногруппами национальных и ненациональных сред, указывается решительная роль таких составляющих нации, как культура и язык. Предлагаются формации национальной социализации и пути, успешно завершающие последние.